Ուսանողական հետազոտություն

Անվտանգ Արցախի տեսլականը

Ստեփանակերտ 2023

Կարեն Բալայան **Արևիկ Բաղիրյան**

Արցախի պետական համալսարան
Իրավագիտություն 2-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու՝
Տաթևիկ Գևորգյան

ԱՆՎՏԱՆԳ ԱՐՑԱԽԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Հետազոտությունն իրականացվել է «Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպության և Արցախի պետական համալսարանի համագործակցության արդյունքում՝ ուսանողական հետազոտական աշխատանքների դրամաշնորհի շրջանակում:

Ներածություն

Անվտանգությունը յուրաքանչյուր պետության և ազգի ապահովության գրավականն է: Այսօր Արցախը կանգնած է անվտանգային լրջագույն խնդիրների առջև: «Անվտանգ Արցախի տեսլականը» պետք է կապել նաև մրցունակ կրթական համակարգի ստեղծման հետ: Կրթական համակարգն ընդգրկում է ընտանեկան դաստիարակումից մինչև հետբուհական կրթություն և ներկայանում որպես առանձին խոշոր ոլորտ, որտեղ ստեղծվում են ազգային հարստության կարևորագույն բաղադրատարրերը՝ գիտելիքների ֆոնդը, հմտությունները, աշխատուժի որակական հատկանիշները: Մեր կարծիքով, առանցքային կրթական բարեփոխումները պետք է կարողանան երկիրը դուրս բերել ճգնաժամից, մրցունակ քաղաքացիները պետք է ունենան բարձր արհեստավարժություն, նորամուծությունների ընդունման ունակություն, բարձր գործնական և անձնական հատկանիշներ, սեփական կարիերայի ընտրության և ստեղծման հնարավորություն, օտար լեզուների և համակարգչային գիտելիքների իմացություն: Արցախցին իր ճակատագիրը պետք է կապի միայն սեփական ուժերի և հնարավորությունների հետ: Այսօր Արցախի անվտանգ տեսլականը կախված է յուրքանչյուրիցս, քանի որ, կորցնելով Արցախը, կկորցնենք հազարամյակների ընթացքում արյամբ ձեռք բերված պետականությունը, հայի ազգային դիմագիծը, կկորցնենք մեր նախնիների թողած մշակութային ահռելի ժառանգությունը և հայ լինելու պատիվը, կկորցնենք մեր ինքնությունը, որը վերագտնել օտար հողում անհնար է: Հայն իր պատմության ընթացքում պատվով հաղթահարել է ավելի դժնդակ ժամանակներ, ուստի ժամանակը չէ վհատվելու և հաշտվելու ստեղծված իրավիճակի հետ, ժամն է գործելու: Հիրավի, կարևոր է վերագնահատել սեփական ուժերը և ստեղծել «Անվտանգ Արցախի տեսլականը»: Դա կհաջողվի միայն համատեղ ուժերով՝ պետական մակարդակով, կառուցվածքային շեշտադրումը դնելով կրթություն-բանակ ասպեկտների վրա:

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է ԱՀ-ում կրթության ոլորտի լայնածավալ բարեփոխումներով, մասնավորապես «Կրթության մասին» ԱՀ օրենքի լրամշակմամբ, կրթության պետական չափորոշչի ձևավորմամբ ու հաստատմամբ, ուսուցիչների վերապատրաստման գործընթացում տեղի ունեցող բարեփոխումներով, ինչպես նաև կրթության որակի նկատմամբ բոլոր շահակիցների տարաբնույթ պահանջմունքներով:

Հիմնախնդիրը: Կրթական համակարգը վաղուց որոնումների մեջ է, մինչդեռ համազգային կրթական տեսլականի մշակումը հետ է մնում՝ կասեցնելով և դեգերումների մեջ պահելով բարեփոխումը: Անշուշտ, այդ տեսլականի մշակումը կապվում է մի շարք խնդիրների հետ:

Առաջինն առնչվում է մանկավարժական կարևորագույն հիմնահարցին: Այսօր կրթությունը չի ոգևորում, չի մղում գործողությունների: Ինչո՞վ է բացատրվում ուսման նկատմամբ հետաքրքրության կորուստը:

Երկրորդ խնդիրը. յուրաքանչյուր պետության լիարժեք քաղաքացի կարող է համարվել միայն տվյալ ժողովրդին բնորոշ և նրա լավագույն ավանդույթներից բխող բարոյական բարձր հատկանիշներով օժտված անհատը:

Նշված խնդիրների լուծումը համապատասխանաբար կապվում է կրթության բաղադրիչների՝ ուսուցման և դաստիարակության փոփոխությունների հետ:

Ժամանակակից հասարակարգում նման առաքելություն պետք է ստանձնեն նախ և առաջ ընտանիքը, դպրոցը և համալսարանը: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն խնդիրները, բայց միաժամանակ պետք է սերտորեն համագործակցեն իրար հետ: Այսօր Արցախի համալսարանական և դպրոցական ծրագրերի աղբյուրների մեջ կան բազմաթիվ տարբերություններ, որոնք առաջացնում են բազում խնդիրներ և հակասություններ: Այս իրավիճակում կա խիստ անհրաժեշտություն բոլոր կրթական օղակների միջև ստեղծել փոխըմբռնման մթնոլորտ և հասնել սպասված կոնսեսուսին: Արցախում կրթության խնդիրը հայ ընտանիքներում ոչ միայն առաջնային չէ, այլ նաև առաջնայնության տեսակետից անկման միտում է ցուցաբերում: Ստեղծված վիճակից ելք գտնելու համար անհրաժեշտ է առանձնացնել երկու ուղղություն՝ ուսումնական գործընթացի նկատմամբ հսկողության ուժեղացում և որակի բարձրացում, ուսումնական գործընթացի կանոնավորում կամ ճշգրտում: Անհրաժեշտ է ընդգծել առկա խնդիրները և հստակ քայլերով առաջ շարժվել դրանց լուծումները գտնելու համար:

Ազգային մտածողության և բնավորության ձևավորմանը միտված տեսլականի մշակման հարցում օգտակար է նաև միջազգային կրթության փորձի ուսումնասիրումը: Ըստ Քինգի՝ կրթության բուն նպատակը պետք է լինի «ինտելեկտ գումարած բնավորություն» բանաձևը:

Հայ մարդն իր ազգային պատկանելիությամբ հպարտանալու հիմքեր պետք է ունենա: Իսկ դրանք գիտելիքներն են: Գիտելիքներ, որոնք կօգնեն «ճանաչել անցյալը, ըմբռնել ներկան և կանխատեսել ապագան»:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Հոդվածի շրջանակում ուսումնասիրվել է թեմային առնչվող հայալեզու և օտարալեզու մասնագիտական արդի գրականություն, իրականացվել է ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի ուսումնասիրություն: Կազմվել է ԱրՊՀ 2020-2023թթ. ուս. տարիների դիմորդների վիճակագրական դիագրամ:

Հետազոտության նորույթը: Նորովի քննվել և վերլուծության են ենթարկվել ԱՀ-ում կրթության զարգացման հիմնախնդիրները, և ներկայացվել են դրանց լուծման ուղիները: Սույն հոդվածի շրջանակում իրականացված վերլուծության արդյունքները կարող են օգտագործվել կրթության ոլորտի բարեփոխումների, ոլորտային քաղաքականության, ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում՝ նպաստելու նրանց մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանն ու կրթության որակի բարելավմանը, ինչը կնպաստի զարգացած և բանիմաց սերնդի ձևավորմանը, որն էլ գիտակից ու առողջ հասարակության և ամուր պետության բանաձևն է:

Հիմնական նյութի շարադրանքը:

Հայ ժողովրդի պատմությունը լի է առեղծվածներով: Ամենածանր ժամանակներում, երբ դրված էր հայության լինել-չլինելու խնդիրը, սկզբնավորվում էր մշակութային զարթոնք, որն այնուհետև դառնում էր ազգային գոյատևման կարևորագույն կռվան: Հայ ժողովուրդը կրկին ապրում է իր պատմության ամենաճակատագրական պահերից մեկը: Այն աստեղային դարձնելը կախված է նրանից, թե ինչպիսի նախապատրաստվածությամբ կդիմավորենք ներկան, թե ինչպես

կգործենք այսօր, ինչ հիմքեր ու նախադրյալներ կստեղծենք հետագա զարգացման համար: Այս պայմաններում ռազմավարական նշանակություն է ձեռք բերում կրթությունը:

Կրթական համակարգը, որը հասարակության ամենազգայուն և մյուս ոլորտների վրա վճռորոշ ներգործություն ունեցող ենթակառույցներից է, կանգնած է արմատական վերափոխման անհրաժեշտության առջև: Ոլորտում հիմնովին տեղ են գտել.

1. Կոռուպցիան,
2. հավասար ու որակյալ կրթության անհասանելիությունը,
3. որակյալ կադրերի նվազումը և արտահոսքը ոլորտից, երկրից,
4. ցածր աշխատավարձը,
5. օրենսդրական դաշտի անբավարար կարգավորումները և մի շարք այլ խնդիրներ:

Արդյունքում խախտվում է ԱՀ յուրաքանչյուր անձի որակյալ կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը:

Սույն հոդվածում տեղ են գտել առաջարկություններ, որոնք, մեր կարծիքով, միտված են ոլորտի մի շարք խնդիրների կարգավորմանը:

Հետազոտության արդյունքում ներկայացվել են ոլորտի առաջնային կարիքները, խնդիրները և դրանցից բխող հետևանքները: Առաջարկությունները ներկայացվում են՝ ելնելով առկա իրավիճակի խնդիրներից:

«Դպրոցն արվեստանոց է, որտեղ ձևավորվում է աճող սերնդի միտքը, հարկավոր է այն ամուր պահել ձեռքում, եթե չես ցանկանում ձեռքից բաց թողնել ապագան», - Անրի Բարբյուս:

Ընտանիքը, իհարկե, համարվում է առաջնային ինստիտուտ, որտեղ զարգանում և ձևավորվում է երեխան, բայցևայնպես, 21-րդ դարի հասարակության լիարժեք քաղաքացի ձևավորելու կարևորագույն գործը վերապահված է դպրոցին: Հանրակրթության հիմնանպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

Դպրոցների հիմնական նպատակներից մեկը պետք է դառնա աշակերտներին ճիշտ ուղղորդելը մասնագիտական կողմնորոշման հարցում, քանզի մեր երկրի գերխնդիրն է որակյալ կադրերի պատրաստումը:

Մեր նախատեսած կրթական համակարգում չի խրախուսվում մի առարկայի խորացված ուսուցումը մյուսի հաշվին (օրինակ՝ մաթեմատիկան ավելի կարևոր առարկա է, քան, ասենք, նկարչությունը): Ամեն մարդ պետք է զբաղվի այնպիսի աշխատանքով, որին նա իր ողջ էությամբ ամենաշատն է համապատասխանում և միևնույն ժամանակ, որը բխում է պետության ու հասարակության շահերից: Մասնագիտության ընտրության հարցում ցանկալի է հաշվի առնել հետևյալ կարևոր երեք գործոնները.

1. ուզում եմ (սեփական ցանկությունն ու տրամադրվածությունը)

2. կարող եմ (սեփական հնարավորություններն ու կարողությունները)
3. պետք է (պահանջարկը աշխատաշուկայում)

Աշակերտների մասնագիտական կողմնորոշման դժվարին աշխատանքի մեծ բաժինը պետք է կրի դպրոցը:

Այս հիմնահարցի ուղղությամբ դպրոցում իրականացվող գործունեությունը պետք է համակարգի դասղեկը՝ դպրոցի հոգեբանի օգնությամբ: Դասղեկի կողմից աշակերտների մասնագիտական կողմնորոշման իրականացումը պետք է ընդգրկի հետևյալ երեք փուլերը.

- Աշակերտի անձի ուսումնասիրում և անձնային որակների բացահայտում (ընդունակություններ, բնավորություն, նախասիրություններ):
- Ընտրված Մասնագիտության մասին բազային գիտելիքների տրամադրում
- Ընտրված մասնագիտության SWOT վերլուծություն(S= Strengths՝ ուժեղ կողմեր, W= Weaknesses՝ թույլ կողմեր կամ թերություններ, O = Opportunities՝ հնարավորություններ, T = Threats՝ սպառնալիքներ):
- Դպրոցում աշակերտների մասնագիտական ճիշտ կողմնորոշման համար կարևոր է իրականացնել տեղեկատվական-ճանաչողական զրույցներ ու միջոցառումներ, բանավեճեր ու կոնֆերանսներ՝ տարբեր մասնագետների և աշակերտների ծնողների մասնակցությամբ: Տարբեր մասնագետների հետ հանդիպումները հնարավորություն կտան աշակերտներին ընտրելու ժամանակակից աշխատաշուկայում մրցունակ մասնագիտություն և ձեռք բերելու աշխատանք գտնելու գրավական:



Վիճակագրական դիագրամն էլ ավելի ակնառու է դարձնում վերջին երեք տարիների շրջանավարտների մասնագիտական ուղղվածությունները: Նվազում է իրենցից մեծ կարևորություն ներկայացնող առարկաների (տարրական մանկավարժություն և մեթոդիկա, պատմություն, մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա) ընդունելությունը: Սա կարող է պայմանավորված լինել թե՛ ներքին (մոտիվացիայի ցածր մակարդակ, ցածր աշխատավարձ), և թե՛ արտաքին (հասարակության մեջ ուսուցչի աշխատանքի ցածր վարկ) մի շարք գործոններով: Նշված հիմնախնդիրը կրթության ոլորտում առկա մյուս հիմնախնդիրներից առավել քան հրատապ է և պետք է ստանա իր օբյեկտիվ լուծումը:

«Մենք երազում էինք մեր հողի մասին, սակայն հողը, որ ստացանք երազանք չէր... Մենք միայնակ էինք, մենք չունեինք կրոնակից եղբայրներ, լեզվակից քույրեր, պատմական հարևաններ... Մենք երկու բան պետք է անեինք, առաջինը՝ մարդիկ պետք է տղամարդ ու արի լինեին, նրանք պետք է հասկանային, որ ընտրություն չունենք՝ մենք պետք է միայն հաղթենք: Երկրորդ՝ զենք չունեինք, հետևաբար սկսեցինք արտադրել, բանակը զարգացնելու համար ստիպված էինք զարգացնել բարձր տեխնոլոգիաները:

Բոլոր մարդկանց ներուժն էլ շատ մեծ է, սակայն բոլորն էլ մի փոքր թույլ են, եթե ցանկանում եք հաջողության հասնել՝ պետք է աշխատել, երկնքից ոչինչ չի ընկնում: Մի փորձեք լուծել անցյալի խնդիրները, անցյալն ընդհանրապես ոչ մի դեր չի խաղում, պարզապես

ուսումնասիրեք, որպեսզի չկրկնեք հին սխալները, անցյալում չկա ոչ ապագա, ոչ հույս: Մարդկանց մեծ մասը փորձում է հիշել, այլ ոչ թե պատկերացնել, դա ամենամեծ սխալն է:

Մի եղեք հոռետես, դա նույնպես ժամանակի զուր վատնում է: Հատկապես, երբ ժամանակները փոխվում են, պետք է գնալ գիտության հետևից, գիտությունը չունի սահմաններ, սահմանափակումներ, ռեֆլեքսիա....», - Շիմոն Պերես:

Եթե մենք մեր առջև նպատակ ենք դրել փոքրաթիվ ժողովրդով ունենալ գերիզոր բանակ, գերիզոր զինատեսակներ, ապա արդյունքի հասնելու համար առաջին քայլը կրթության զարգացումն է: Կրթական բարեփոխումները պետք է կատարել աստիճանակարգությամբ. դյուրին և մատչելի դարձնել տարրական դասարանների ուսուցումը, միջին դպրոցում զարգացնել ՏՏ ոլորտը, ստեղծել մասնագիտացված ավագ «դպրոցներ»՝ քոլեջներ, խստացնել ուսուցիչների վերապատրաստումները (քայլել Ժամանակին համահունչ), զարգացնել քննադատական մտածողությունը ավագ դպրոցականների շրջանում, արտերկրից որակյալ մասնագետներ հրավիրել ՏՏ ոլորտի զարգացման համար, ստեղծել ռոբոտաշինության կենտրոններ:

Կրթության ազդեցությունը երկրի պաշտպանունակության, տնտեսության, միջազգային հարաբերությունների վրա անհամեմատ մեծ է: Տնտեսության արտադրության համակարգում զգալի է կրթական ոլորտի դերը: Այսպես ամերիկյան տնտեսագետները ցույց են տվել, որ 1929-1982թթ. ընթացքում արտադրության աճի վրա առանձին գործոնների ազդեցությունն ունեցել է հետևյալ տեսքը. ֆորմալ կրթությունը (դպրոց, ԲՈՒՀ) 26%, արտադրության մեջ որակավորման բարձրացումը 55%, կապիտալ սարքավորումները 20%:

Տնտեսության և, մասնավորապես, արտադրության զարգացման գործընթացը պահանջում է աշխատուժի կրթական մակարդակի անընդհատ բարձրացում:

Ինչ վերաբերում է միջազգային հարաբերություններին՝ դիվանագիտությանը՝ մեր երկրի պարագայում կարևորագույն ոլորտն է հանդիսանում: Դեռևս միջազգայնորեն չճանաչված Արցախի Հանրապետությունը պետք է ձեռնամուխ լինի միջազգայնագետների պատրաստմանը՝ իր շահերը միջազգային հարաբերություններում պաշտպանելու համար: Արցախում միջազգային հարաբերություններ մասնագիտության բացակայության պայմաններում առաջարկվում է հայաստանյան բուհերի համար տրամադրվող 1-2 անվճար տեղերը հնարավորինս շատացնել:

Պետության բնականոն զարգացման համար տնտեսական դիվանագիտությունը կարևորագույն գործառույթներից մեկն է: Համաշխարհային և տարածաշրջանային շուկաներին ինտեգրվելու և զարգացած տնտեսություն ապահովելու համար էական դեր է խաղում դիվանագիտությունը:

Վերոնշյալ բոլոր կետերի հիմքում կրթությունն է, ուստի բարեփոխումներ իրականացնելու առաջին օղակը պետք է լինի կրթական համակրգը:

Արցախյան գիտակրթական համակարգի զարգացման գործում մեծ նշանակություն ունի ոչ միայն ինքնուրույն տեսլականների ձևավորման գործընթացը, այլ նաև զարգացման գագաթնակետին հասած գիտակրթական համակարգերի նմանօրինակումը: Այսօր իր

զարգացվածության աստիճանով աշխարհում կարևոր տեղ են զբաղեցնում ճապոնական և ֆիննական գիտակրթական համակարգերը:

Ճապոնական կրթական համակարգը երկու անգամ կատարեց փոխառություններ համակարգը զարգացնելու նպատակով, սակայն ճապոնացիները կարողացան այն կատարելագործել և դարձնել ազգային: Այսօր արցախահայության համար փոխառման աղբյուր կարող է հանդիսանալ արդեն զարգացվածության բարձր աստիճան ունեցող ճապոնական գիտակրթական համակարգը: Եթե համեմատենք ճապոնական և մեր դպրոցական կրթական համակարգերը, ապա այն կունենա նույն տասներկուամյա կրթական համակարգը տարբեր բաշխվածության համալիրներով: Ճապոնիայում տարրական դպրոցում բավականին հեշտ է սովորել՝ չկան տնային առաջադրանքներ և քնություններ, իսկ մեր իրականության մեջ դպրոցում ստացած գիտելքն ու տնային առաջադրանքներն անհամաչափ են իրենց ծավալային հարաբերակցությամբ: Մեծ է անհրաժեշտությունը բարեփոխումների հենց տարրական օղակում, քանի որ կրտսեր դպրոցականը գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերման իր առաջին փորձերն է կատարում: Այս պարագայում ճիշտ կլինի մեջբերել ճապոնիայի նախկին վարչապետ Տանականի խոսքերը՝ «Նույնիսկ հասակս առած, ես, մինչև օրս, խորհելով, թե ինչպես ապրել, ելնում եմ այն հիմքերից, որ իմ մեջ դրվել են դեռ տարրական դպրոցում», այսինքն տարրական դպրոցը անհրաժեշտ է դարձնել մարդկային արժեքների դարբնոց: Սակայն այդ աշխատանքը անհրաժեշտ է կատարել էտապային եղանակով, որի արդյունքում ընտանեկան դաստիարակության արժեքները կփոխադրվեն տարրական կրթական համակարգ: Այսպիսով, ստեղծելով կատարյալ տարրական կրթական համակարգ ավագ դասարաններում, կկասեցնենք այսպես ասած «քննական դժոխքը», որն այսօր առկա է մեր իրականության մեջ: Եթե մեզ հաջողվի հասնել այն բանին, որը կապահովի տարրական բարձրակարգ կրթություն, այն կհանգեցնի անգրագիտության վերացմանը և իրավագիտակցության բարձրացմանը: Տարրական դպրոցը պետք է ստեղծի այնպիսի հիմնարար արժեքներ, որոնք հետագա միջնակարգ և բարձրագույն կրթության համար հիմք կհանդիսանան: Այս կրթական համակարգի բարելավման համար կարող է մեծ նշանակություն ունենալ նաև մեր հոդվածի նկարագրում նշված «մեկ քայլ հետ, երկու քայլ առաջ» սկզբունքը, եթե նայենք ոչ այնքան հեռու անցյալին, ապա կտեսնենք խորհրդային ժամանակաշրջանի կրթական համակարգը, որն այն ժամանակ համարվում էր մրցակցությունից դուրս իր որակյալ մասնագետների պատրաստմամբ: Մեզ նաև պետք է որպես շարժառիթ դարձնենք այն փաստը, որ այս երկու պետությունները գիտակրթական զարգացվածության գագաթնակետին հասան պատերազմական ժամանակաշրջանում՝ պատերազմական կարիքները հոգալու համար: Եվ երկու պետությունների գիտակրթական համակարգերի զարգացմանը նպաստեցին հենց թշնամի պետությունների գիտակրթական համակարգերի ազդեցությունը: Ճապոնացիները իրենք ազնվորեն ընդունում են այն փաստը, որ նրանց կրթական համակարգը ունի բազմաթիվ փոխառություններ ամերիկյան կրթական համակարգից, բայց և համառորեն փաստում են այն մասին, որ ամբողջ կրթական փոխառությունները նրանք հարմարեցրել են իրենց և դարձրել ազգային: Իսկ խորհրդային պետության պարագայում անժխտելի է այն փաստը, թե ինչպիսի գիտակրթական ավար է անցել խորհրդային պետությանը պատերազմի հաղթական ավարտից հետո, որի արդյունքում ԽՍՀՄ-ը հասավ զարգացվածության գագաթնակետին: Եթե հետևենք այս երկու օրինակներին, ապա մեզ համար խիստ անհրաժեշտություն է հանդիսանում

հակառակորդի գիտակրթական համակարգի ուսումնասիրությունը, որը մեզ թույլ կտա հասնել ազգային այնպիսի զարգացվածության աստիճանի, որը կդառնա զարգացման գրավական:

Արցախյան իրականության մեջ գիտակրթական զարգացվածության տեմպը և զարգացման իրատեսականները մեծապես կապված են տարածաշրջանային անցուդարձի և միջազգային բախումների հետ: Արցախյան կրթական համակարգի զարգացման ապահովումը մենք կկարողանանք ապահովել միայն սեփական կրթության զարգացման և բարելավման շնորհիվ, ստեղծելով մի այնպիսի պատկեր, որտեղ կհամաձուլվեն համաշխարհային գիտակրթական լավագույն օրինակները և կհարմարեցվեն արցախյան իրականությանը:

Նախօրոք նշված զարգացման միտուների մարտավարության մեջ կարևոր դեր է հատկացվում դպրոցների զարգացմանը և կատարելագործմանը: Դպրոցների կատարելագործման գործում կարևոր նշանակություն ունեն դպրոցական համակարգի ժամանակային բաժանման փաստը: Արդյո՞ք ներկայիս իրավիճակը լրիվությամբ համապատասխանում է ժամանակային բոլոր պահանջներին և մարտահրավերներին: Մեր առջև կա համընդհանուր կրթական խնդիր, որի բուն էությունը կայանում է նրանում, թե արդյո՞ք նման ժամանակային բաժանման արդյունքում կատարվում է առարկաների օպտիմալ դասավանդում և յուրացում, արդյո՞ք առկա է այն փաստը, որ կա հավասարություն բոլոր դասավանդվող առարկաների միջև, կամ առկա են դոմինանտ առարկաներ, որոնք իրենց դոմինանտությամբ գերակշռում և մյուս առարկաների կարևորության նվազեցման պատճառ են հանդիսանում: Արդյո՞ք նշված բոլոր խնդիրները կարելի է կապել ընտանիքի կամ դպրոցի հետ կամ արդյո՞ք ընտանիքը և դպրոցը չունեն համահավասար մեղքի բաժինը տվյալ անորոշ իրավիճակում:

Արցախում գործող կրթական համակարգը փոխառված է եվրոպական ստանդարտներից, որը, չնայած իր բազմամյա ներդրվածության, մեր կրթական արժեքների մեջ ամբողջովին չի յուրացվել և, նույնիսկ, դրա միտումները չունի:

Այսօր կրթության զարգացման համար կարևոր գրավական է հանդիսանում կրթական նոր համակարգի գործարկումը և զարգացումը, ինչպես արդեն նշեցինք այսօրվա դրությամբ առկա է հայկական մի շարք կրթական ծրագրեր, որոնցից ամենամեծ զարգացվածություն և հաջող գործարկման պատմություն ու ավանդ ունի «Արարատյան բակալավրիատ»-ի կրթական ծրագիրը: Այն իրենից ներկայացնում է ազգային գիտակրթական մտքի ու գործի միասնական փաթեթ: Ներկայումս փորձեր են կատարվում այս ծրագրի գործարկումն իրականացնել հայկակական դպրոցական և բուհական գիտակրթական համակարգերում: Խնդիրը տեղայնացնելով՝ նշենք, որ Արցախում նույնպես կատարվել է վերոնշյալ կրթական ծրագրի ներդրման քայլեր, տեղի է ունեցել ուսուցչական անձնակազմի մրցույթներ, որի արդյունքում հաղթած ուսուցիչները անցել են համապատասխան վերապատրաստում և ստացել որակավորում: Նախատեսվում էր նաև աշակերտական անձնակազմի փորձի փոխանակում, սակայն ծրագիրը չպահպանեց իր գոյությունը: Այդ ծրագրի արդյունավետությունը զգացել ենք մեր կրթական արժեքների և մակարդակի բարձրացմամբ, քանի որ ուսուցիչներիցս մի քանիսը, հանդիսանալով տվյալ կրթական ծրագրով վերապատրաստված կադրեր, ամբողջությամբ իրենց փորձը ներդրել էին կրթական ծրագրի զարգացման մեջ: Այդ ծրագիրը ամբողջությամբ

արդարացնում է իր նպատակները և ունի ազային միասնություն ստեղծելու և հզորացնելու միտումներ:

Ուսումնասիրելով Ֆինլանդիայի կրթական համակարգը՝ առանձնացրել ենք մի քանի փաստական կարևոր հանգամանքներ, որոնցից ամենամեծ կարևորությունը կարելի է տալ համընդհանուր դպրոցական սկզբունքներին՝ հավասարության սկզբունքին, որն իրենից ներկայացնում է բազմաբովանդակ հասկացություն՝

- Դպրոցների հավասարությունը

Պետությունում բացառվում է մի դպրոցի առավելությունը մեկ այլ դպրոցի նկատմամբ, որակյալ կադրերի, աշակերտների նկատմամբ վերաբերմունքի և նույնիսկ աշակերտների քանակով դպրոցները լրիվությամբ հավասար են, որը ցավոք սրտի այսօր մեզ մոտ բացակայում է, և որի միակ մեղավորը հասարակության մեջ ձևավորված կարծրատիպերն են:

- Ծնողների հավասարության սկզբունքը

Խստիվ արգելված է հետաքրքրություն ցուցաբերել երեխայի ծնողի աշխատանքի և պաշտոնի նկատմամբ, բայց այնինչ մեր երկրում գործում է՝ «ասա ծնողիդ պաշտոնը ասեմ գնահատական» սկզբունքը:

- Աշակերտների հավասարության սկզբունքը

Չկա աշակերտների տեսակավորման հարց՝ բացառվում է աշակերտներին համեմատել միմյանց հետ, կատարվում է սահմանափակ կարողություններ ունեցող աշակերտների ինտեգրում: Այնինչ մեզ մոտ դաստիարակության և հասկացողության մակարդակը այնքան ցածր է, որ այդպիսի մարդիկ կարող են ծաղրի առարկա դառնալ:

- Ուսուցիչների հավասարության սկզբունքը

Կտրականապես բացառվում է առանձնացումը սիրված կամ չսիրված ուսուցիչների: Հակառակ պրոցեսը ուսուցչի կողմից նկատվելու դեպքում, ուսուցչի հետ պայմանագիրը խզվում է: Այնինչ մեզ մոտ այն ունի խորը արմատներ:

- Ուսուցչի, ծնողի և երեխայի հավասարության սկզբունքը

Հենց առաջին դասարանից սկսվում է աշակերտների մեջ սերմանվել այն երևույթը, որ իրենք ունեն իրավունքներ և դրանք անհրաժեշտ է պաշտպանել և թույլ չտալ դրանց ոտնահարումը:

Անհատականացման սկզբունքը, որին նույնպես մեծ կարևորություն է տրվում առանձնանում է նրանով, որ յուրաքանչյուր աշակերտի ցուցաբերվում է անհատական մոտեցում՝ նախապես ձևավորված և կազմված պլանի համաձայն: Հատկապես, ուշադրություն է դարձվում ֆիզիկական և հոգեկան արատներ ունեցող երեխաներին, փորձ է արվում նրանց ինտեգրել հասարակության՝ իրենց տարիքի երեխաների շրջապատ: Իհարկե մեզ մոտ այդպիսի փորձեր կատարվել են, սակայն հաջողության չեն հասել, տվյալ դեպքում անհրաժեշտ է վեր հանել ձախողման պատճառները և շտկել դրանք:

Շատ կարևոր է աշակերտի մոտ ձևավորել անհատականացման և ինքնուրույնության ձեռք բերման փորձ, այն չի ձևավորվի, եթե աշակերտը շարունակական ձևով կատարի թեստային աշխատանքներ և իր ունակությունները ցույց չտա պրակտիկ ոլորտում:

Կրթական համակարգում իդեալիզմի հասնելու համար անհրաժեշտ է ձևավորել վստահության մթնոլորտ աշակերտների և դպրոցի անձնակազմի միջև: Ուսուցիչների կողմից տրված գնահատականը չպետք է հանդիսանան աշակերտի անձնական և մարդկային հատկանիշների չափանիշ: Աշակերտի մեջ պետք է սեր առաջացնել ուսման հանդեպ, և զարգացնել ուսումնառության կարևորության գիտակցումը, այլ ոչ թե զուտ գնահատականների մրցապայքար:

Իհարկե, ամենամեծ խնդիրը այժմ ինքնուրույն, կազմակերպված մարդ դաստիարակելն է: Պետք է գործի այնպիսի դպրոցական համակարգ, որտեղ աշակերտը կգիտակցի, որ մոտ ապագայում ոչ իր ծնողներն են իր կողքին գտնվելու և ոչ էլ սիրելի ուսուցիչները, և նա միայնակ է դիմակայելու կյանքի փորձություններին:

Եթե չլինի որակյալ դպրոցական համակարգ, չի կարող նաև գոյություն ունենալ բոլոր այն համակարգերը, որոնք այս կամ այն ճանապարհով կապված են դպրոցի հետ: Եթե փորձենք կարճ ներկայացնել այս իրավիճակը, ապա այն կարելի է անվանել «գեղեցիկ դատարկություն»:

Այժմ անդրադառնանք ավագ դպրոց-համալսարան կապին. տրամաբանորեն այս երկու օղակները պետք է փոխկապակցված լինեն, քանի որ կրթական համակարգում ժամանակագրորեն հաջորդում են միմյանց: Ավագ դպրոցի երեք տարիները պետք է ուղղված լինեն բուհի նախապատրաստմանը, սակայն երկու կառույցների միջև ծրագրային անհամապատասխանության պատճառով չի իրականացվում: Ավագ դպրոցի ուսումնական ծրագրերն ամբողջությամբ ուղղված են կրկնությունների իրականացմանը, սակայն այդ ծրագիրը նախ և առաջ չի համապատասխանում միասնական քննությունների համար նախատեսված ուղեցույցներին, որն առաջին հերթին մեծ դժվարություններ է առաջ բերում՝ ուսումնառության մեջ առաջացնելով արհեստական արգելքներ, որոնք դժվարացնում են ուսումնառության բնականոն ընթացքը և առաջ բերում կրկնակի ուսումնառության խնդիր: Ամբողջ եռամյա կրթության ընթացքում մեծ ուշադրություն է դարձվում այնպիսի առարկաների և այնպիսի կրթական ծրագրերի, որոնց ուսումնասիրությունը բացարձակապես անօգուտ է, և դեռ ավելին՝ եղած գիտելիքները մոռացվում է: Ասածներս փաստացի դարձնելու համար այս ամենը ցույց տամ իմ սեփական օրինակի վրա՝

«Ես, ավարտելով հիմնական դպրոցի ուսումնառությունը, ընդունվել եմ հոսքային ավագ դպրոց՝ ընտրելով հումանիտար հոսք, քանի որ արդեն որոշել էի ապագա մասնագիտությունս, ցանկանում էի դառնալ իրավաբան, իսկ ինչպես բոլորիս հայտնի է իրավաբանական կրթություն ստանալու համար անհրաժեշտ էր հանձնել երեք միասնական քննություն՝ Հայոց պատմություն, Հայոց լեզու առարկաներից և որևէ մի կամընտրական օտար լեզվից: Նախ և առաջ ես փաստի առաջ կանգնեցի՝ իմանալով, որ այն նյութը, որը ես ուսումնասիրել եմ իմ եռամյա ուսումնառության ընթացքում, բացարձակապես չի համապատասխանում այն նյութի պահանջներին, որի հիման վրա պիտի հանձնեմ իմ միասնական քննությունները, երկրորդ

խնդիրը առաջացավ այն ժամանակ, երբ ընդունվելուց հետո իմացանք, որ այս առարկաները, որոնց քնությունների արդյունքների հիման վրա համալսարանական ուսումնառության շրջանակում ունեն երկրորդական դեր և նույնիսկ դրանց կարճատև ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտություն կա ուսումնասիրել նույն առարկաները, բայց բացարձակապես այլ բովանդակությամբ, քանի որ կրթական ծրագրերում չկա համապատասխանություն: Եվ այն առարկան, որը տվյալ մասնագիտության համար կարող է հիմք հանդիսանալ՝ Հասարակագիտությունը, համարվում էր երկրորդական առարկա և գրեթե ուշադրություն չէր դարձվում, իսկ համալսարանում հասրակագիտության լավ իմացությունը լավ հիմք կարող է հանդիսանալ իրավաբանական կրթության համար»:

Բերածս օրինակը հիմնավոր դարձնելու համար անդրադարձ կատարենք 1978 թվականին Մարդու իրավունքների միջազգային կոնգրեսի մշակած դրույթներին, որով ամրագրվեց հետևյալ կրթական նպատակները՝

1. խթանել մարդու իրավունքներին բնորոշ հանդուրժողականության, հարգանքի ու համերաշխության վերաբերմունք,

2. Տրամադրել գիտելիքներ մարդու իրավունքների մասին՝ ազգային և միջազգային մակարդակներով, և սահմանված մարդու իրավունքների կատարման կազմակերպությունների տեսակետից,

3. զարգացնել անձի իրազեկությունն այն ուղիների ու միջոցների մասին, որոնց միջոցով մարդու իրավունքները կարող են արտացոլվել սոցիալական և քաղաքական իրականությունում, կամ էլ ազգային և միջազգային մակարդակներում:

Այս նպատակների վերլուծմամբ կարելի է առանձնացնել երեք հիմնական կետ՝

1. Գիտելիքներ
2. Հմտություններ
3. Պրակտիկա

Գիտելիքների փոխանցման առումով ավագ դպրոցը չի կարողանում ապահովել գիտելիքների այն բազան, որը համալսարանական և հետհամալսարանական կյանքում կդառնա ուղեցույց: Գիտելիքների պակասը համալսարանական կյանքում հանգեցնում է արդեն մասնագիտական գիտելիքների դժվար ընկալմանը և կիրառմանը:

Գիտելիքները և հմտությունները ավելի կիրառելի դարձնելու համար անհրաժեշտ է դրանց պրակտիկորեն կիրառությունը, պրակտիկ կիրառության խնդիրը ավելի արտահայտված երևում է բնագիտական առարկաների դասավանդման շրջանակներում: Չկա նյութատեխնիկական բազա փորձերի կատարման և առարկան ավելի մատչելի դասավանդման համար:

Այսպիսի խնդիրներից խուսափելու և եղած խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է վարել ճիշտ կադրային քաղաքականություն և ստեղծել կայուն դպրոցական համակարգ՝ բոլոր անհրաժեշտ պայմաններով, որտեղ դպրոցական բոլոր օղակները կունենան կայուն միասնություն ու փոխկապակցվածություն: Բացի այդ, եթե դպրոցներում չլինի որակյալ

կրթություն, ապա անհնարին է դառնում համալսարանական կրթության բարձր մակարդակի ապահովումը և որակյալ մասնագետների պատրաստումը:

Անցում կատարելով համալսարանական կրթությանը՝ կարող եմ նշել այն, որ տեղի է ունենում համալսարանական կրթության այնպիսի ռիսկային փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել բարձրագույն կրթական համակարգի հետընթացի և այն ցուցանիշները, որոնք եղել են վերջին տարիներին, հօդս կցնդեն: Իհարկե, յուրաքանչյուր բնագավառում, այդ թվում նաև համալսարանական կյանքում, եթե չկան փոփոխություններ ապա տեղի է ունենում լճացում:

Տարիների ընթացքում ինչպես բոլոր ոլորտները այնպես էլ համալսարանական կրթությունը ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների: Եթե փորձենք տվյալ փոփոխությունները թվարկել ապա, կստանանք հետևյալ պատկերը՝

1. Համալսարանական կրթության տևողության փոփոխություն: Ընդհանուր հնգամյա կրթությունը փոխարինվեց առանձին քառամյա բակալավրիատի և երկամյա մագիստրոսական կրթություններով:

2. Քննական պրոցեսում ավելացավ տեխնիկական ներգրավվածությունը:

3. Մտցվեց կրեդիտային համակարգ:

Ընդհանուր հնգամյա կրթության պարագայում թերի բարձրագույն կրթությունը բացառված էր, ով ստանում էր հնգամյա կրթություն, համարվում էր բարձրագույն ավարտ անձ, իսկ հիմա, եթե չունես մագիստրոսական կրթություն, ապա քառամյա բակալավրը կհամարվի թերի: Բայց այն ունի նաև իր լավ կողմերը մագիստրոսական ծրագիր ավարտած մարդը համարվում է նեղ մասնագիտացում ստացած մասնագետ:

Հիմա անդրադարձ կատարենք համալսարանական քննական համակարգին, ինչպես արդեն գիտենք գոյություն ունեն երեք տիպի քննություններ՝ ավանդական, եզրափակիչ գնահատմամբ և առանց եզրափակիչ գնահատմամբ քննություններ՝

1. Ավանդական քննություններ հանձնվում են ոչ մասնագիտական առարկաներից, ինչը կարելի է համարել դրական չափորոշիչ, քանի որ այս դեպքում ոչ մասնագիտական առարկայի քննական արդյունքները չեն ազդում ընդհանուր արդյունարար գնահատականի վրա:

2. Եզրափակիչ գնահատմամբ քննությունները իրենցից ներկայացնում են երկու ընթացիկ համակարգչային քննություններ և մեկ եզրափակիչ քննություն: Քննության այս տիպը բացառում է օբյեկտիվ գնահատումը, քանի որ համակարգչային քննությունները գիտելիքների չափորոշիչ չեն, կարող են փոխել գնահատականների ընդհանուր տեսքը, և լավ ու վատ սովորողների միջև չի լինի տարբերություն:

3. Իսկ ահա առանց եզրափակիչ քննությունները իրենից ներկայացնում են ավելի օբյեկտիվ գնահատում, քանի որ բացառվում է տեխնիկայի առկայությունը քննական պրոցեսում, իսկ ուսանողը պատասխանում է այնքանով, ինչքանով պատրաստ է այդ առարկային:

Ինչպես արդեն նշվեց, եզրափակիչ քննությունների ընթացքում առկա են համակարգչային քնություններ, որոնք իրենցից ներկայացնում են թեստային առաջադրանքներ և չունեն օբյեկտիվ գնահատում:

Հաջորդը կրեդիտային համակարգն է, որի արդյունքում տարբերություն է դրվում նույնիսկ մասնագիտական առարկաների միջև՝ ուսումը դարձնելով միավորային մրցավազք, այլ ոչ թե՝ գիտելիքի ստացման աղբյուր:

Իհարկե, միայն թերությունները թվարկելը գործնականում մեզ ոչ մի օգուտ չի տա, և որևէ առաջընթաց չենք ապահովի, ուստի անհրաժեշտ է կատարել մի շարք գործնական քայլեր համալսարանական կրթության որակի բարձրացման և որակյալ մասնագետների թողարկման համար: Մինչ նոր փոփոխություններ կատարելը, անհրաժեշտ է իրականացնել առկա թերությունների շտկում և բարելավում: Այդ ամենի համար անհրաժեշտ է իրականացնել կրթական ծրագրերի օպտիմալացում և հարմարեցում ժամանակաշրջանին, ինչպես արդեն նշել ենք անհրաժեշտ է կրթական տարիների ամբողջացում, որի ընթացքում կբացառվի թերի կրթության առկայությունը: Արդեն թվարկված երեք տիպի քնությունները անհրաժեշտ է օպտիմալացնել և ընդհանրացնելով ստեղծել մեկ տիպի քննական համակարգ: Անհրաժեշտ է տեխնիկական միջոցների դուրս մղումը քննական պրոցեսներից: Իսկ կրեդիտային համակարգի բարելավման համար պետք է ոչ թե կրեդիտների տարբերություններ մտցնել մասնագիտական առարկաների միջև, այլ ուսանողին հավելյալ կրեդիտներ տրամադրել՝ մասնագիտական առարկաներից ցուցաբերած ակտիվության համար:

Մեծ կարևորություն է իրենից ներկայացնում ուսանողության ներգրավվածությունը բոլոր տիպի փոփոխությունների մեջ: Այսօր համալսարանական համակարգում գործում են մի քանի ուսանողական կազմակերպություններ, որոնք մեծ ներգրավածություն ունեն ուսանողական կյանքի միայն ինտերակտիվ մասի ապահովման մեջ, անհրաժեշտ է նաև, որ այդ կազմակերպությունները, որպես ուսանողության շահերի պաշտպան, ձեռնարկեն այնպիսի քայլեր, որոնք կլինեն ի օգուտ ուսանողության:

Օպտիմալ համալսարանական կյանք և կրթություն կազմակերպելու համար անհրաժեշտ է ստեղծել նաև սեփական գիտաֆոնդ՝ ներգրավելով բոլոր տեղական գիտնականներին, ապահովել սեփական մասնագիտական գրականություն: Սեփական մասնագիտական գրականության առկայության դեպքում հնարավորություն կստանանք տեղայնացված մակարդակով խորությամբ ուսումնասիրել տարածաշրջանային խնդիրները:

Խնդիրների լուծմանը կարող է նպաստել նաև պրակտիկ ժամաքանակի ավելացումը, քանի որ եթե ուսանողը ամեն մի ուսումնասիրությունից հետո հնարավորություն ունենա այդ գիտելիքները կիրառել գործնականում, ապա կհասնենք աննախադեպ արդյունքների: Իհարկե յուրաքանչյուր փոփոխություն իրականացնելուց առաջ անհրաժեշտ է հաշվի առնել նաև մեր տարածաշրջանային խնդիրները և իրականացնել համապատասխան փոփոխությունները, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել համալասարանի կողմից ռազմական ուսուցմանը և ռազմական դաստիարակությանը: Անհրաժեշտ է համալսարանական կրթության մեջ ավելացնել ռազմարվեստին վերաբերվող դասընթացներ և դրանք բոլորի համար դարձնել պարտադիր: Այս

դեպքում ուսանողության կողմից կպահանջվի դասընթացներին անխտիր մասնակցություն ապահովել, իսկ համալսարանից՝ ապահովել նյութատեխնիկական բազան և որակյալ մասնագետներ: Այս դեպքում իրենից մեծ կարևորություն կներկայացնի բանակ-համալսարան կապի անխափան ապահովումը, որը երկուստեք կապահովի փոխադարձ հաջողություններ:

Համաձայն «ԱՀ կրթության մասին» օրենքի՝ բակալավրի կրթական ծրագիրն ավարտած ուսանողն կարող է ընդունվել մագիստրատուրա, որը հանդիսանում է մասնագիտացման աղբյուր: Բայց և կարևոր է ընդգծել, որ ներկայիս կրթական համակարգը չի ապահովում որակյալ մասնագիտացում մագիստրատուրայում:

Ըստ Սահմանադրության՝ Արցախի հանրապետությունը ժողովրդավարական և իրավական պետություն է, մեկ այլ խնդիր է օրենսդրության պահանջների կատարումն ու դրանց իրացումը իրական կյանքում յուրաքանչյուրիս կողմից: Հենց այստեղ է, որ առաջանում է էական տարբերություն գրված օրենքի և իրական կյանքի միջև: Հասարակության անընդհատ փոփոխվող պահանջմունքները բավարարելու և հասարակական զարգացումներից հետ չընկնելու ու դրանց համապատասխանելու նպատակով, ակնհայտ է, որ նույնիսկ ամենակատարյալ օրենսդրությունն անընդհատ կատարելագործվելու և լրացվելու կարիք ունի: Յուրաքանչյուր քաղաքացի իր առօրյա կյանքում պետք է գործի իրավական ակտերի պահանջների անշեղ կատարման հրամայականով՝ գիտակցելով, որ դա իրավական պետություն կառուցելու մեջ իր կարևորագույն ներդրումն է: Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ նորաստեղծ պետություններն ի վիճակի են կայուն պետություն ստեղծել, եթե կա հասարակական կոնսեսուս, վճռականություն և ժամանակագրորեն մշակված գործողությունների մշակույթ: Գործողությունների առաջին պլան պետք է մղվի՝ պայքարը որակյալ կրթության և հանուն ժողովրդավարության, միևնույն ժամանակ՝ շատ ուշադիր ընկալել համաշխարհային զարգացումները, որոնք և հնարավորությունների, և նոր ռիսկերի անընդհատ աղբյուր են:

Եզրակացություն: Իրականացված ուսումնասիրությունները փաստում են, որ կրթական համակարգի զարգացումն է այն ակունքը, որից պետք է սկզբնավորվի Արցախի Հանրապետության զարթոնքը: Կրթական համակարգը, որը հասարակության ամենազգայուն և մյուս ոլորտների վրա վճռորոշ ներգործություն ունեցող ենթակառույցներից է, այժմ կանգնած է արմատական վերափոխման անհրաժեշտության առջև: Ընտանիքը, իհարկե, համարվում է առաջնային ինստիտուտ, որտեղ զարգանում և ձևավորվում է երեխան, բայցևայնպես 21-րդ դարի հասարակության լիարժեք քաղաքացի ձևավորելու կարևորագույն գործը վերապահված է դպրոցին: Դպրոցում առկա հիմնախնդիրները պայմանավորված են թե՛ ներքին (մոտիվացիայի ցածր մակարդակ, ցածր աշխատավարձ), և թե՛ արտաքին (հասարակության մեջ ուսուցչի աշխատանքի ցածր վարկ) մի շարք գործոններով: Դպրոցների հիմնական նպատակներից մեկը պետք է դառնա աշակերտներին ճիշտ ուղղորդել մասնագիտական կողմնորոշման հարցում, քանզի մեր երկրի գերխնդիրն է որակյալ կադրերի պատրաստումը: Այս հիմնահարցի ուղղությամբ դպրոցում իրականացվող գործունեությունը պետք է համակարգի դասղեկը՝ դպրոցի հոգեբանի օգնությամբ: Դասղեկի կողմից աշակերտների մասնագիտական կողմնորոշման իրականացումը պետք է ընդգրկի հետևյալ փուլերը.

- Աշակերտի անձի ուսումնասիրում և անձնային որակների բացահայտում
- (ընդունակություններ, բնավորություն, նախասիրություններ):
- Ընտրված մասնագիտության մասին բազային գիտելիքների տրամադրում
- Ընտրված մասնագիտության SWOT վերլուծություն (S= Strengths՝ ուժեղ կողմեր, W= Weaknesses՝ թույլ կողմեր կամ թերություններ, O = Opportunities՝ հնարավորություններ, T = Threats՝ սպառնալիքներ):
- Դպրոցում աշակերտների մասնագիտական ճիշտ կողմնորոշման համար կարևոր է իրականացնել տեղեկատվական-ճանաչողական զրույցներ ու միջոցառումներ, բանավեճեր ու կոնֆերանսներ՝ տարբեր մասնագետների և աշակերտների ծնողների մասնակցությամբ:

Եթե մենք մեր առջև նպատակ ենք դրել փոքրաթիվ ժողովրդով ունենալ գերհզոր բանակ, գերհզոր զինատեսակներ, ապա արդյունքի հասնելու համար առաջին քայլը կրթության զարգացումն է: Կրթական բարեփոխումները պետք է կատարել աստիճանակարգությամբ. դյուրին և մատչելի դարձնել տարրական դասարանների ուսուցումը, միջին դպրոցում զարգացնել SS ոլորտը, ստեղծել մասնագիտացված ավագ «դպրոցներ»՝ քոլեջներ, խստացնել ուսուցիչների վերապատրաստումները (քայլել ժամանակին համահունչ), զարգացնել քննադատական մտածողությունը ավագ դպրոցականների շրջանում, արտերկրից որակյալ մասնագետներ հրավիրել SS ոլորտի զարգացման համար, ստեղծել ռոբոտաշինության կենտրոններ:

Կրթության ազդեցությունը երկրի պաշտպանունակության, տնտեսության, միջազգային հարաբերությունների վրա անհամեմատ մեծ է: Տնտեսության արտադրության համակարգում զգալի է կրթական ոլորտի դերը: Տնտեսության և, մասնավորապես, արտադրության զարգացման գործընթացը պահանջում է աշխատուժի կրթական մակարդակի անընդհատ բարձրացում:

Ինչ վերաբերում է միջազգային հարաբերություններին՝ դիվանագիտությանը՝ մեր երկրի պարագայում կարևորագույն ոլորտն է հանդիսանում: Դեռևս միջազգայնորեն չճանաչված Արցախի Հանրապետությունը պետք է ձեռնամուխ լինի միջազգայնագետների պատրաստմանը՝ իր շահերը միջազգային հարաբերություններում պաշտպանելու համար: Արցախում միջազգային հարաբերություններ մասնագիտության բացակայության պայմաններում առաջարկվում է հայաստանյան բուհերի համար տրամադրվող 1-2 անվճար տեղերը հնարավորինս շատացնել:

Պետության բնականոն զարգացման համար տնտեսական դիվանագիտությունը կարևորագույն գործառույթներից մեկն է: Համաշխարհային և տարածաշրջանային շուկաներին ինտեգրվելու և զարգացած տնտեսություն ապահովելու համար էական դեր է խաղում դիվանագիտությունը:

Վերոնշյալ բոլոր կետերի հիմքում կրթությունն է, ուստի բարեփոխումներ իրականացնելու առաջին օղակը պետք է լինի կրթական համակարգը:

Ավագ դպրոցի երեք տարիները պետք է ուղղված լինեն բուհի նախապատրաստմանը, սակայն երկու կառույցների միջև ծրագրային անհամապատասխանության պատճառով չի իրականացվում: Ավագ դպրոցի ուսումնական ծրագրերն ամբողջությամբ ուղղված են կրկնությունների իրականացմանը, սակայն այդ ծրագիրը նախ և առաջ չի համապատասխանում միասնական քննությունների համար նախատեսված ուղեցույցներին, որն առաջին հերթին մեծ դժվարություններ է առաջ բերում՝ ուսումնառության մեջ առաջացնելով արհեստական արգելքներ, որոնք դժվարացնում են ուսումնառության բնականոն ընթացքը և առաջ բերում կրկնակի ուսումնառության խնդիր: Ավագ դպրոցն ավելի արդյունավետ դարձնելու համար պետք է աշակերտին նախապատրաստել համալսարանական ուսումնառությանը: Ինչ վերաբերում է համալսարանական կրթության թերություններին.

1. Առկա են երեք տեսակի քննություններ՝ ավանդական, եզրափակիչ գնահատմամբ և առանց եզրափակիչ գնահատմամբ: Ավանդական քննություններ հիմնականում հանձնվում են ոչ մասնագիտական առարկաներից, ինչը կարելի է համարել դրական չափորոշիչ, քանի որ այս դեպքում ոչ մասնագիտական առարկայի քննական արդյունքները չեն ազդում ընդհանուր արդյունարար գնահատականին: Եզրափակիչ գնահատմամբ քննությունները իրենից ներկայացնում են երկու ընթացիկ համակարգչային քննություններ և մեկ եզրափակիչ քննություն: Քննության այս տիպը բացառում է օբյեկտիվ գնահատումը, քանի որ համակարգչային քննությունները գիտելիքների չափորոշիչ չեն և կարող են փոխել գնահատականների ընդհանուր տեսքը և լավ ու վատ սովորողների միջև չի լինի տարբերություն: Իսկ ահա առանց եզրափակիչ քննությունները իրենից ներկայացնում են ավելի օբյեկտիվ գնահատում, քանի որ բացառվում է տեխնիկայի առկայությունը քննական պրոցեսում, իսկ ուսանողը պատասխանում է այնքանով, ինչքանով պատրաստ է այդ առարկային:

2. Հաջորդը կրեդիտային համակարգն է, որի արդյունքում տարբերություն է դրվում նույնիսկ մասնագիտական առարկաների միջև՝ ուսումը դարձնելով միավորային մրցավազք, այլ ոչ թե գիտելիքի ստացման աղբյուր:

Արդեն թվարկված երեք տիպի քնությունները անհրաժեշտ է օպտիմալացնել և, ընդհանրացնելով, ստեղծել մեկ տիպի քննական համակարգ: Անհրաժեշտ է տեխնիկական միջոցների դուրս մղումը քննական պրոցեսներից: Իսկ կրեդիտային համակարգի բարելավման համար անհրաժեշտ է ոչ թե կրեդիտների տարբերություններ մտցնել մասնագիտական առարկաների միջև, այլ ուսանողին հավելյալ կրեդիտներ տրամադրել՝ մասնագիտական առարկաներից ցուցաբերած ակտիվության համար:

Օպտիմալ համալսարանական կյանք և կրթություն կազմակերպելու համար անհրաժեշտ է ստեղծել նաև սեփական գիտաֆոնդ՝ ներգրավելով բոլոր տեղական գիտնականներին, ստեղծել սեփական մասնագիտական գրականություն: Սեփական մասնագիտական գրականության առկայության դեպքում հնարավորություն կստանանք տեղայնացված մակարդակով խորությամբ ուսումնասիրել տարածաշրջանային խնդիրները:

Ըստ Սահմանադրության՝ Արցախի հանրապետությունը ժողովրդավարական և իրավական պետություն է, մեկ այլ խնդիր է օրենսդրության պահանջների կատարումն ու դրանց իրացումը

իրական կյանքում յուրաքանչյուրիս կողմից: Ակնհայտ է, որ նույնիսկ ամենակատարյալ օրենսդրությունն անընդհատ կատարելագործվելու և լրացվելու կարիք ունի: Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ նորաստեղծ պետություններն ի վիճակի են կայուն պետություն ստեղծել՝ եթե կա հասարակական կոնսենսուս, վճռականություն և ժամանակագրորեն մշակված գործողությունների մշակույթ: Գործողությունների առաջին պլան պետք է մղվի պայքարը որակյալ կրթության և հանուն ժողովրդավարության, միևնույն ժամանակ անհրաժեշտ է շատ ուշադիր ընկալել համաշխարհային զարգացումները, որոնք և հնարավորությունների, և նոր ռիսկերի անընդհատ աղբյուր են:

Օգտագործված գրականության ցանկ

1. ԼՂՀ օրենքը կրթության մասին, ընդունված Ազգային Ժողովի կողմից, Ստեփանակերտ, 2000
2. Հարությունյան Ա., Հակոբյան Ե., Գրիգորյան Յ., Ուսումնական ձեռնարկ, Մաս առաջին, Առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդական հիմունքները հանրակրթական դպրոցում, Երևան 2015:
3. Ղազարյան Է.Մ., Ապավինել ազգային դպրոցի ամուր հիմքերին (Հոդվածների, ելույթների, հարցազրույցների ժողովածու), Երևան 2007
4. Ճապոնացիները, ազգահոգեբանական ակնարկներ, ռուս. Երկրորդ հրատ. Թարգմ. Կ.Կ. Այվազյանը, Երևան 1989
5. Հասարակագիտություն առարկայի դասավանդման խնդիրները բուհ-ում և դպրոցում, հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2016
6. Дыхан Л.Б., Кукушин В.С., Трушкин А.Г. Педагогическая валелогия, Учебное пособие для студентов педагогических вузов , Москва-Ростов-на-Дону, 2005, с 152-153